«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

---

18 նոյեմբերի, 2022 թ. N 27-Լ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՈՒԴԻՏՈՐՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱԳԵՏ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ՊԱԼԱՏ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ և ԻՐԱՎԱԿԱՆ ԱՅԼ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) հարկային և իրավական այլ հարցերով ժամանակավոր հանձնաժողովի կանոնադրության 7.1 կետը՝ Պալատի խորհուրդը որոշում է՝

1. Հաստատել «Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության հարկային և իրավական այլ հարցերով հանձնաժողովի 2023 թվականի գործունեության տարեկան ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Պալատի պաշտոնական կայքում հրապարակվելուց հետո:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ԹԱԹՈՒԼ ՄՈՎՍԻՍՅԱՆ

Հավելված
«Հայաստանի աուդիտորների և փորձագետ
հաշվապահների պալատ»
հասարակական կազմակերպության խորհրդի
2022թ. նոյեմբերի 18-ի N 27 - L որոշման

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ»

հասարակական կազմակերպության

հարկային և իրավական այլ հարցերով հանձնաժողովի

2023 թվականի գործունեության ծրագիրը

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» հասարակական կազմակերպության (այսուհետ՝ Պալատ) հարկային և իրավական այլ հարցերով հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2023թ. գործունեության ծրագիրը (այսուհետ՝ Գործունեության ծրագիր) կազմվել է ի կատարումն Հանձնաժողովի կանոնադրության 7.1 կետի՝ նպատակ ունենալով ապահովել Հանձնաժողովի գործառույթների արդյունավետ իրականացումը և Պալատի խորհրդի կողմից Հանձնաժողովի գործունեության նկատմամբ արդյունավետ հսկողության իրականացումը:

ԾՐԱԳՐԻ ԿԱԶՄՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ և ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Գործունեության ծրագրի հիմքում դրված են Հանձնաժողովի կանոնադրությամբ սահմանված ինչպես հիմնական («պարտադիր»), այնպես էլ այլ («ոչ պարտադիր») գործառույթները և նպատակները:

Գործունեության ծրագիրը կազմելիս նախատեսվող միջոցառումները և դրանց կատարման ժամկետները պլանավորվել են՝ ելնելով յուրաքանչյուր կոնկրետ գործառույթի բնույթից, նրա իրականացման նկատմամբ սահմանված պահանջներից և այն իրականացնելու համար անհրաժեշտ միջոցներից:

Հանձնաժողովի կողմից այլ գործառույթների իրականացման համար կոնկրետ միջոցառումներ և ժամկետներ սահմանված չեն՝ դիտարկելով դրանք որպես ընթացիկ աշխատանքներ, որոնք կիրականացվեն ըստ անհրաժեշտության:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

h/h	Գործառույթ	Միջոցառում	Ժամկետ
1	Իրավական ակտերի և դրանց նախագծերի ուսումնասիրություն և առաջարկությունների ներկայացում	Կուսումնասիրվեն ՀՀ պետական մարմինների կողմից մշակված հարկային, մաքսային, ինչպես նաև աշխատանքային և քաղաքացիական հարաբերությունները կարգավորող օրենսդրությանն առնչվող հարցերի վերաբերյալ իրավական ակտերի և դրանց նախագծերը և, ըստ անհրաժեշտության, կներկայացվեն առաջարկություններ	Հունվար-դեկտեմբեր: Առանձին իրավական ակտերի նախագծերի համար ժամկետ նախատեսված լինելու դեպքում՝ մինչև այդ ժամկետի ավարտը
2	ՀՀ ՖՆ և ՀՀ ՊԵԿ գործող, խորհուրդների նիստերում քննարկվող հարցերի և (կամ)	Կուսումնասիրվեն նիստերում քննարկվող հարցերը և (կամ) իրավական ակտերի նախագծերը ուսումնասիրություն և կներկայացվեն	Համապատասխան խորհրդի կողմից

	իրավական ակտերի նախագծերի ուսումնասիրություն և համապատասխան առաջարկությունների ներկայացում	համապատասխան առաջարկություններ՝ ինչպես գրավոր, այնպես էլ նիստերին մասնակցության միջոցով	նշանակված ժամկետներում
3	Աշխատաժողովների, կոնֆերանսների, սեմինարների և այլ միջոցառումների կազմակերպում	Պալատի անդամների մասնակցությամբ «կլոր սեղան» քննարկման կազմակերպում, որևէ հարկատեսակի կամ հարկատեսակների վերաբերյալ	Հունվար-դեկտեմբեր
4	Շարունակական մասնագիտական զարգացման դասընթացների նախաձեռնում	Դասընթացների կազմակերպում՝ հանձնաժողովի անդամների կամ հրավիրված մասնագետների միջոցով	Հունվար-դեկտեմբեր
5	Պալատի խորհրդի հանձնարարությամբ և Պալատի ներքին իրավական ակտերով նախատեսված այլ գործառույթներ	Միջոցառումներն ըստ անհրաժեշտության	Հունվար-դեկտեմբեր

Հարկային և իրավական այլ հարցերով

հանձնաժողովի նախագահ՝ **Համլետ Սահակյան**